| | |
|---|---|
| «ՖՐԱՆՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ | ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՌԵՍՈՒՐՍ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԹՎԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ<br><br>2020/2021 |

Սույն կանոնակարգը սահմանում է ուսումնական հաստատության /այսուհետ՝ ՖՀՄՈՒԿ/ ռեսուրս կենտրոնի թվային սարքավորումների պատշաճ օգտագործման կանոնները սովորողների և ուսումնական անձնակազմի համար:

**Առարկան**

ՖՀՄՈՒԿ-ի սովորողների /այսուհետ Օգտատեր/ համար նախատեսված ուսուցման շրջանակում առաջարկվում է օգտագործել հաստատության ուսումնական տեղեկատվական ռեսուրսները: Ուսումնական տեղեկատվական ռեսուրսները ներառում են ցանցը, սերվերը կամ սերվերները, հաստատության աշխատանքային կայանները, ներքին սարքավորումները, տարաբնույթ ծրագրերը, ինտերնետին միացումը (լարային կամ անլար):

**Տեղեկատվական ռեսուրսներին մուտքի իրավունքի պայմանները**

Ռեսուրս կենտրոնում առկա տեխնիկական ռեսուրսները նախատեսված են կիրառել բացառապես ուսումնական կենտրոնում ուսուցանվող կրթական ծրագրերին համապատասխան:
Ցանկացած այլ օգտագործում, առանց տնօրենի համաձայնության, խստորեն արգելվում է:

**Սահմանված կանոնները.**

Օգտատերը պարտավոր է.

չբացել, չձևափոխել ուրիշին· պատկանող ֆայլերը և, մասնավորապես, առանց վերջինիս թույլտվության, չփորձել մուտք գործել նրան պատկանող տեղեկատվության մեջ,

- չփոփոխել աշխատանքային կայանների կոնֆիգուրացիան,
- փոփոխության չենթարկել կամ չոչնչացնել ցանցային տվյալները,
- ինքնակամ չխափանել ծառայությունների գործունեությունը և, հատկապես, չներմուծել անվտանգությունը շրջանցող կամ վնասակար ծրագրեր (վիրուսային, լրտեսական կամ այլ ծրագրեր),
- խնամքով օգտագործել ռեսուրս կենտրոնի գույքը:

**1) <u>Համացանցի օգտագործման հատուկ կանոններ.</u>**

Համացանցի օգտագործումը պետք է բացառապես իրագործվի կրթական ծրագրերի շրջանակում :

- Մուտքը համացանցին միշտ կատարվում է դասավանդողի կամ ռեսուրս կենտրոնի պատասխանատուի ներկայությամբ, որը տալիս է կայքերին միանալու թույլտվության համաձայնությունը:
- Ուղիղ կապով միացումը երկխոսության ծառայություններին, քննարկումներին կամ սոցիալական ցանցերին սահմանափակվում է վերը սահմանված պայմաններով :
- Չարտոնագրված էջերում ինքնակամ որոնումները (պոռնոգրաֆիկ, մարդատյաց, բռնություն, ռասիստական բնույթի…) խստիվ արգելվում է:
- Արգելվում է ներբեռնել ցանկացած ծրագիր:

| | | |
|---|---|---|
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |
| Անուն, | ազգանուն, | ստորագրություն |